

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


~~ՀԱՀ 10~~ 04 AUG 2010

ՎԻԽԵՎԻԶ և ՍՄՄՈՒՅՑԼՈՎ

ՏՐԱԿՏՈՐԻԱ - ՄՈՏՈՍԱՊՅԱՐԻ
ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

Թարգմ.՝ Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԻՃԱԿ
ИНСТИТУТ
ВІДОНОВЛЕННЯ
Академії Наук
СССР



ՈՒԶՄՀՐԱՑԲԱԺԻՆ

ԳԵՏՀՐԱՏ

1932

ՅԵՐԵՎԱՆ

629:113

Վ-62

Ի՞նչ ուժը և շիշի ՏՐԱԿՏՈՐԻՍ-ՄՈՏՈՍԱՊՅՈՐԸ

Տրակտորը կարմիր բանակի մարտական զենքն է, իսկ տրակտորիստ-մոտոսապյորը այն մարտիկն է, վորի համար աշխատանքն ու ժանդակում և մարտում հաղթություն տանելուն:

1. Խնամքով և ուշադրությամբ վարվիր քո զենքի-տրակտորի հետ: Հիշիր, վոր տրակտորի ամեն մի կոտրվածքի և անսարքության նամար դու խիստ պատասխանառություն ետ կրում քո մասի և Խորհրդային յերկրի առաջ:
2. Ամեն որ զննիր տրակտորն ու միջոցներ ձեռք առ՝ անսարքություններն անմիջապես վերացնելու համար:

3. Թույլ մի տա, վոր շարժիչն աշխատի գերբեռվածությամբ:

4. Յերբեք մի հեռանար տրակտորից, յեթե նրա շարժիչն աշխատում է:

5. Ճանապարհին ամեն մի կանդառում ողագործիր մեքենան զննելու համար:

6. Աշխատանքից վերադառնալուց հետո, խնամքով զննիր տրակտորը, մաքրիր նրան, ուղղիր և ամրացրու գնդերիթները (բոլտ) ու մանեկները (դայկա):

7. Ցուրաքանչյուր տրակտորին տրվում

14.495

12 AUG 2013

Են կցվող սայլակներ, վորոնց վիճակի համար
դու պատասխանատու յես այնպիս, ինչպես և
տրակտորի համար:

ՇԱՐԺԻՉԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

Շարժիչի գործարկումից առաջ նայիք՝

1. Ռադիատորում ջուր կա՞ արդյոք:
2. Կարտերի և տուփերի մեջ կա՞ ար-
դյոք անհրաժեշտ քանակությամբ յուղ:
3. Պահամաններում վառելանյուր կա՞
արդյոք:
4. Համոզվիր՝ փա՞կ ե արդյոք նավթի պա-
համանի վենտիլը և բաց արա բենզինի պահա-
մանի վենտիլը:
5. Ապերեժենյեյի լծակը դիր ուշ այրեց-
ման վրա, իսկ դրոսելային կափարիչը (կլա-
պան) — արտահատի (սեկտոր) մեջտեղը:
6. Ծորակների մեջ մի փոքր բենզին լցրու
(յուրաքանչյուրում 1-2 սեղանի դկալի շա-
փով):
7. Ռադիատորը շտորայով կիսով չափ
ծածկիր:

8. Ոդի խափանիչը (զառլոնկա) համարյա
մինչև վերջ ծածկիր և խառնուրդիչի վերին
կանոնավորող ասեղը $1\frac{1}{2}$ -2 պտույտով թու-
լացրու:

9. Տես, վոր արագուրյունների լծակը
գտնվի չեզոք դիրքում և շարժիչի լիսեռը
(վալ) բանեցման ավելի դարձրու $\frac{1}{4}$ -ից մին-

4



57103-66

չի $1\frac{1}{4}$ պտույտ ուժեղ շարժումով ցածից վեր:
Յեթե առաջին պտույտաներից չի հաջող-
վում բանեցնել շարժիչը, ապա բանեցնելը
կրկնիր նույն կարգով:

10. Տարվա ցուրտ յեղանակներին շարժի-
չի նախնական տաքացման համար կատերի մեջ
լցնում են տաքացրած յուղ:

11. Շարժիչը բանեցնելիս չոլետը և նրան
հաղորդել միանդամից մեծ պտույտներ:

Անհրաժեշտ և սպասել մինչև յուղի տա-
քանայր շարժիչում:

12. Թույլ մի տա վերելանյութի ավելորդ
ներծծում, վորի ժամանակ կարող ե փակվել
ոպային խտիանիչը: Այս դեպքում պետք ե
համել մոմերը, փակել կանոնավորող առեղներն
ու «Փչել» շարժիչը, պտույտով նրան բանեցման
կոթով:

ՇԱՐԺԻՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Յերբ շարժիչն սկսի աշխատել, անմի-
ջապես լրիվ բաց արա ոդային խափանիչը, իսկ
պտուելով կանոնավորող ասեղը, աշխատիր
ստահալ նրա պտտույտների ամենամեծ թիվը
և հավասարաչափ հնչյուններ արտահեղ խո-
զովակում:

2. Շարժիչը նավթով չախառնեցման մինչև
նրա տաքանալը, և չմոռանաս դրանից հետո
իջեցնել շտորան:

3. Շարժիչը նավթով աշխատեցնելուց հե-
տո, յեթե 5-10 րոպեյի ընթացքում տեղի կու-

5

նենան շարժիչի ընդհատումներ ու արտահեղ
խողովակում կլսվի անհավասարաչափ հըն-
չյուն, ապա նորից կարգավորիր խառնուրդը:

4. Խնամքով կարգավորիր կարբյուրատո-
րը՝ շարժիչի փոքր պտույտներ ստանալու հա-
մար: Ստորին կարգավորող կափարիչի և դրա-
սելային խափանիչի կողմնային պտուտոկի
ոգնությամբ աշխատիր, վոր շարժիչի աշխա-
տանքը լինի հավասար ու հանդար:

5. Ուշադրություն դարձրու յուղի վերա-
հսկիչ-մասնակի վրա՝ շարժիչի աշխատան-
քի ժամանակ մանոմետրի մոտ չպետք է յերե-
վան կարմիր արտահատներ:

6. Ականջ դիր գլանների աշխատանքին
և, յեթե կլսես քրիսկոց, անմիջապես զեկուցիր
ավտոտեխնիկին:

7. Վառելանյութի կանոնավոր մատակա-
րաբան դեպքում գագերի արտահեղ խողո-
վակներում ծովաչ չպետք է լինի:

8. Ուշադրություն դարձրու, վոր վենտի-
լյատորի փոկը ճշմած լինի, փոկը ճշիր դապա-
նակի ոգնությամբ այնքան, վոր բոլորովին
վերանա փոկի (բեմենի) սահելը:

ՏՐԱԿՏՈՐԻ ԱՌԱՋԱՎԵՔ ՑԱՆԿԱՐՀԻՆ

1. Անպայման հետեւիր, վոր շարժիչը չգե-
րասահանա, վոչ մի դեպքում բույլ չտաս,
վոր ռադիատորում ջուրը յեռա:

2. Վերելքներում (պադյում) և վարեցքներ-
ում (սպուսկ) արագությունը մի փոփոխիր:

3. Պրիցեպկայով աշխատելու ժամանակ
տարվա տաք յեղանակին ջրային խառնուրդիչի
ասեղնավոր կափարիչը պետք է $1\frac{1}{2}$ պտույտով
բաց անել: Յեթե շարժիչն աշխատում է ընդհա-
տումներով, ապա վառելանյութի մասա-
կարաբումը կանոնավորիր կանոնավորող տաե-
ղի ոգնությամբ, ինչպես սովորաբար այդ ար-
վում և բանեցման ժամանակ կամ պակասաց-
րու ջրի մատակարաբումը:

4. Տրակտորի աշխատանքը բեռնավորու-
մով, վորպես ընդհանուր որենք, պետք է կա-
տարվի 2-րդ արագությամբ: 3-րդ արագու-
թյունը պետք է ոգտագործել ամեն մի հնարա-
վորության դեպքում՝ տեղափոխության արա-
գացման, մասնաւոր տնտեսման և մեքե-
նայի քիչ մաշվելու համար:

5. Արագությունների փոփոխումն ան-
պայմանորեն կատարիր փոքր պտույտների
ժամանակ, ընդունին հարակցման մուֆտը մին-
չև վերջ դուրս սեղմիր:

6. Հետեւիր, վոր յուղի պոմպը (նասոս)
կանոնավոր մատակարաի յուղը:

7. Յեթե աշխատում էս կոլոննայում, ապա
պահպանիր հեռավորությունը (դիստանցիա)
և հետեւիր սիզնայներին:

8. Յեթե առջևից զնացող տրակտորն ան-
արքությունից անսպասելիորեն կանգ առավ,
ապա գգուշությամբ նրա մոտից առաջ անցիր
ու շարունակիր շարժումը:

9. Հետեւիր արգելակային լծակի դրու-

թյանն ու թույլ մի տա, վոր մաշվի, հակառակ դեպքում կաճի դիմադրությունն ու կդերատաքանա շարժիչը:

10. Խթաններով (չպոր) յերթեեկելը խճուղիով արգելվում է, ուստի շարժվիր ճանապարհի յեզրով:

11. Վոչ մի դեպքում թույլ չտաս, վոր սրակտորը յերկու հոգով քեն:

12. Պտուտաթիվը (որորոտ) աճելու հետ միասին պետք է բարձրացնել ապերեժնյեն և ընդհակառակը՝ նվազելուց պետք է իջեցնել:

ՇԱՐԺԻՉԻ ԿԱՆԳՆԵՑՆԵԼ

1. Շարժիչը կանգնեցնելուց առաջ աշխատեցրու բենզինով:

2. Շարժիչը կանգնեցրու բացարկելով այրեցումն և միաժամանակ փակիր ողային խափանիչը:

3. Տարվա ցուրտ յեղանակին ջուրը թափիր ուսղիատորներից ու ճախարակներից (բլոկ):

4. Բոլոր կափույրները, ասեղնավոր կափարիչներն ու ծորակները պետք է փակ լինեն:

5. Սկսիր շարժիչը նախապատրաստել նրանից հետո միայն, յերբ նա կառչի:

6. Տրակտորը կարճ ժամանակով կանգնեցնելու դեպքում անպայման բացարկիր արագությունը (այսինքն լծակը կանգնեցրու չեղոք դիրքում), իսկ դագի և այրեցման լծակ-

ները կագնեցրու շարժիչի փոքր պառայտների համար:

ՇԱՐԺԻՉԻ ՆԱԽԱՏՐԱՎԱՏԻՈՄԸ
ՑԵՎ ՏՐԱԿՏՈՐԻ ԱՍԵՆՈՐՅԱ ԶՆՆՈՒՄԸ

1. Զուրը ուսղիատորի մեջ լցրու փալասի միջով մինչև վերահսկիչ խողովակի մակարդակը:

2. Ռադիատորի խուփիը պտուտակիր ամուր և հետեւիր, վորպեսզի աշխատանքի ժամանակ ուսղիատորից ջուրը դուրս չցատկի:

3. Ռեզերվուարների խցանները մուրճի կամ հատիչի հարվածներով յերբեք մի բաց անիր:

4. Բաց անելով խցանը, չափիր վառելացյուրի մնացորդներն ու ծախսը գրիր ուղեղը մեջ:

5. Վառելանյութը զգուշությամբ և անպայման քամիչի (Փիլտր) միջոցով լցրու: Կեղակալը (ատստոյնիկ) մաքրիր ու լվա:

6. Կատերի մեջ յուզ լցնելու ժամանակ բաց արա վերին վերահսկիչ ծորակն ու հետեւիր, վորպեսզի ծորակից յուղը յերկա, վորովհետեւ յուղի պակաս ու ավել վնելը վնասում և շարժիչի աշխատանքին:

7. Վերահսկիչ ծակի ողնությամբ ստուգիր յուղի մակարդակը փոխանցումների պատյանի (կոժուխ) մեջ:

8. Յուղելուց առաջ կեղտից մաքրիր տափոտի ամանն ու շտուցները:

9. Ամեն որ յուղի՞ր՝

ա) առջեկ սոնու և շրջյակի (ցապֆա) հոգակապը (շարնիր),

բ) առջեկ անիվների աստիճանները,

գ) զարձկեն ճանկերի (կուլակ) հողակապերը,

դ) հարակցման մուֆտի առանցքակալը,

յի) հետեկ անիվների առանցքակալները,

զ) զեկի ձգման հողակապերը,

ե) մազնետոյի և կարգավորիչի լիսեռները,

ը) կափարիչային լծակների յուղելու համար յեղած տաշոը (ավտոլի 100-200 կաթիլ),

թ) զեկի մեխանիզմի պարույրն ու նրա այլ շփող մասերը:

10. Զննիր՝ սարքի՞ն են արդյոք մեխանիզմների և նրանց միացումների՝ մոտորի, փոխանցման և ընթացքային մասի բոլոր ամրացումները:

11. Ստուգիր՝ արդյոք լրիվ ու սարքի՞ն են անհրաժեշտ գործիքներն ու պարագաները:

12. Հանիր մոմերն ու մաքրիր նրանց այրվույտից (նազար):

ՊԱՐԵՐԱ-ԱՆ ԶԱՆՈՒՄ ՑԵՎ ՅՈՒՂՈՒՄ

1. Աշխատանքի յուրաքանչյուր քսան ժամ հետո ողագուչի յուղը փոխիր:

2. 30 ժամ հետո յուղիր մազնետոն. վոռկրայուղով (30-40 կաթիլ):

3. 30-40 ժամ հետո սոլիդոլով յուղիր ո-

դափոխիչի (վենտիլյատոր) հողովակի (չկիվ) սոնու առանցքակալները:

4. 50 ժամ հետո սոլիդոլով յուղիր ողագուչի բարձակը (կրոնշտեյն):

5. 50-60 ժամ աշխատելուց հետո կարտերի միջի յուղը փոխարինիր թարմ յուղով ու այդ կարտերը լվա նավթով:

6. 100 ժամից հետո նավթով մաքրիր ողագուչի լցվածքը:

7. 150-200 ժամից հետո նավթով լվա կարտերը:

8. 120-150 ժամից հետո յուղիր բանեցման կոթի առանցքակալները:

9. 200 ժամից հետո ձգիր շատունե առանցքակալները:

10. 500 ժամից հետո փոխանցման պատրանի յուղը փոխիր:

11. Զմոռանաս լվանալ կարտերի մեջ յեղած բոլոր ֆիլտրներն ու ցանցերը:

12. Աշխատանքի 120 ժամից հետո կոնտրոլ խցանի ողնությամբ ստուգիր փոխանցման տուփի մեջ յեղած յուղի մակարդակն ու նրա վրակիր:

13. Հետևիր, վորպեսզի շարժիչի աշխատանքի 120-150 ժամից հետո տեխնիկը ստուգի տրակտորի բոլոր մեխանիզմների աշխատանքն ու գլխավորապես կափարիչների աշխատանքը:

1. Աշխատանքից վերադառնալուց հետո տրակտորը մաքրիր ցեխից, փոշուց և լվա ջրով, այնուհետև բոլոր մասերը շփիր չոր փալասով:

2. Մեքենայի այն մասերը, վորոնցից ներկը փաթվել են, հարկավոր ենորից ներկել կամ ժամանակավորապես ծածկել յուղի շերտով:

3. Տրակտորի այն մասերը, վորոնք հրպելում են հողի հետ (անիվները, անիվի շրջանակները, խթանները), չի կարելի յուղել, այլ պետք են պահել մաքուր և չոր դրության մեջ:

4. Նույնպես մաքուր ու սարքին պահիր պրիցեպկայի սայլակներն ու ամեն որ ստուգիր նրանց դրությունը:

5. Ճշտությամբ ապահովելով տրակտորի հետ վարվելու բոլոր մատնանշած կանոնները, դու կապահովես տրակտորի հաստատուն, անընդհատ ու յերկարատև աշխատանքը:

ՑԱՍՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՍՐԹՈՒԹՅՈՒՆԵՐՆ ՈՐ ՆՐԱՆՑ ՎԵՐԱՑՆԵԼ

1. Արտահեղ խողովակից սև ծուխ և դուրս դալիս, յերբ վառելանյութը չափից ավել են կանոնավորիր խառնուրդիչը:

2. Արտահեղ խողովակից բաց-կապտավուն ծուխ դուրս դալու դեպքում կարտերից դուրս թափիր յուղի ավելցուկը վերին կոնտրու ծորակի միջով:

3. Ցեթե վառելանյութի մատակարարման մեջ նկատվում են ընդհատումներ, ապա մաք-

րիր վառելյանյութ տանող խողովակն ու խառնուրդիչի Փիլտրը:

4. Շարժիչի աշխատանքի ընդհատումները կարող են աեղի ունենալ մումերի կեդտակալելուց. հանիր ու մաքրիր այդ ժոմերը:

5. Ցեթե գլաններում թրիկոց ե լսվում, ապա կանոննեցրու ուշ այրեցման վրա: Ցեթե թիւկոցը չվերանա, ստուգիր կափարիչների, մատների, առանցքակալների խողովակը կամ տրակտորի բեռը թեթևացրու:

6. Ցեթե շարժիչը գերատաքանում ե, ապա՝

ա) այրեցումը դիր ավելի շուտ,

բ) կանոնավորիր վառելանյութի խառնուրդի մատակարարումը,

գ) ստուգիր, դուցե անբավարար ե յուղած,

դ) տես ողափոխիչի փոկն աշխատանքի ժամանակ հո դուրս չի ընկնում և ձգիր նրան,

յե) ստուգիր ուսդիատորի միջի ջուրը և յեթե պակաս ե, ավելացրու:

Գերատաք շարժիչով աշխատել չի կարելի: Կանոննեցրու նրան, քննիր և վերացրու անսարքությունները:

Անվտանգության և նախազգուշացման միջոցներ

1. Շարժիչը բանեցնելիս բանեցման կոքը մեծ մատով չընեն և ապերեժենյե լծակը միշտ գիր ուշ այրեցման վրա:

2. Պրիցեպկային մոտեցիր միայն 1-ին արագությամբ և քիչ դազ տալով:

3. Ուշադրությամբ ողտվիր հատկապես հետեւի արագությունով, այս ժամանակ աշխատիր շարժիչի նույնպես փոքր պլույտներով:

4. Տեղից շարժվիր միայն այն ժամանակ, յերբ հարակցողը (սցեպչիկ) հրահանգի «պատրաստ ե», նախորոք ստուգիր հարակցումը:

5. Ստուգիր արագությունների լծակի գիրքն ու տեղից շարժվիր, հանդարտ իջեցնելով հարակցման մուֆտի լծակը:

6. Ընթացքի ժամանակ վոչ մի ուղղում չի կատարի և վոչ վոքի մի թողնի տրակտորի մոտ՝ նրա շարժման ժամանակ:

7. Լավ ուսումնասիրիր հրդեհը նախատեսնող հրահանգը:

Տրակտորը բարդ և արժեքավոր մեքենա յեւ Ուսումնասիրիր նրա կառուցվածքը, նրա մեխանիզմների աշխատանքն ու մասերի փոխադրությունը:

Սոցմրցման մեջ մտիր լավ խնամելու ու պահպանելու համար: Վերացրու կոտրվածքներն ու անսարքությունը: Բարձրացրու տրակտորի որվա աշխատանքի նորման: Զգտիր վառելանյութի ծախսը հասցնել նվազագույն չափի:


Հիշիր, վոր տրակտորի անընդհատ ու յերկարաժամ աշխատանքը կախում ունի տրակտո-

րիստ մոտոսապյորից, վորը պատաժանատույցի իր մեքենայի պահպանման համար այնպես, ինչպես կարմիր բանակի յուրաքանչյուր մարտիկը ոլատասսիանատու յեւ նրան հանձնած զենքի պահպանման ու անընդհատ գործածության համար:

ՀՀ Ազգային գրադարան



NL0276831



Գետերութեազուրան Սրբագրեց Հ. Մատիկյան

Պատվիր Խ. 2745, Հրամ. № 2342 Գլուխիս, № 7630 (բ), Տ. ուսում 8000

Հանձնված և արագության 21 ոգոսառու 1932 թ.

Սարադրված և ազագության 28 գետեմբերի 1932 թ.

14.4.95

ԳԻՒԸ 20 Կ.



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВЪЗТОНОДАНИЯ
Академии Наук
СССР



Виневич и Самуйлов
Памятка
трактористу-мотосаперу